երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1215-11.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սպասարկման կենտրոններից դուրս քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանում է նախարարը».

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կազմակերպում է գործակալության գործունեությունը և իրականացնում է վերջինիս նկատմամբ վերահսկողությունը».

2) 3-րդ և 12-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 11-րդ կետում «գործակալության» բառից հետո լրացնել «և սպասարկման կենտրոնի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «մեթոդական ղեկավարումը.» բառերը փոխարինել «ղեկավարումը.» բառով:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սպասարկման կենտրոնի աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իսկ աշխատանքային այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն քաղաքացիական ծառայության և (կամ) հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:».

2) 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ մասում «ցանկը» բառից հետո լրացնել «(ներառյալ տվյալ նստավայրերում գործող հաստիքների բաշխվածությունը)», իսկ «պետական կառավարման» բառերից հետո հանել «կամ տեղական ինքնակառավարման» բառերը:

Հոդված 5. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում «մեկ ամիս» բառերը փոխարինել «երկու ամիս» բառերով:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին.

2) Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Գործակալության սպասարկման կենտրոններին վերապահված գործառույթներն իրականացնող համայնքային ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը: Արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոններում ՀՀ արդարադատության նախարարի հրամանով սահմանված սպասարկման կենտրոններում գործող հաստիքային միավորներին համապատասխան համայնքային ծառայողների հետ կնքվում են ժամկետային աշխատանքային պայմանագրեր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ պաշտոնի համար անցկացվող մրցույթի արդյունքով նշանակում կատարելը.

3) Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սպասարկման կենտրոններից դուրս քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանում է նախարարը».

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կազմակերպում է գործակալության գործունեությունը և իրականացնում է վերջինիս նկատմամբ վերահսկողությունը».

2) 3-րդ և 12-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 11-րդ կետում «գործակալության» բառից հետո լրացնել «և սպասարկման կենտրոնի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «մեթոդական ղեկավարումը.» բառերը փոխարինել «ղեկավարումը.» բառով:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սպասարկման կենտրոնի աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իսկ աշխատանքային այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն քաղաքացիական ծառայության և (կամ) հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:».

2) 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ մասում «ցանկը» բառից հետո լրացնել «(ներառյալ տվյալ նստավայրերում գործող հաստիքների բաշխվածությունը)», իսկ «պետական կառավարման» բառերից հետո հանել «կամ տեղական ինքնակառավարման» բառերը:

Հոդված 5. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում «մեկ ամիս» բառերը փոխարինել «երկու ամիս» բառերով:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին.

2) Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Գործակալության սպասարկման կենտրոններին վերապահված գործառույթներն իրականացնող համայնքային ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը: Արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոններում ՀՀ արդարադատության նախարարի հրամանով սահմանված սպասարկման կենտրոններում գործող հաստիքային միավորներին համապատասխան համայնքային ծառայողների հետ կնքվում են ժամկետային աշխատանքային պայմանագրեր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ պաշտոնի համար անցկացվող մրցույթի արդյունքով նշանակում կատարելը.

3) ~~Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:~~ Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1215-11.12.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ Կառավարություն***	**««Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մաս**	Առաջարկվում է փոփոխել ««Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային կարգավորումը, մասնավորապես՝ անցումային դրույթում օրենքից բխող իրավական ակտերի ընդունումը մինչև օրենքի ուժի մեջ մտնելը սահմանելու փոխարեն դրանց ընդունումը պայմանավորել օրենքի ընդունմամբ: Ըստ այդմ՝ Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո՝ մեկամսյա ժամկետում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: